



ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեպտեմբերի 9-ը Առաջին օգնության համաշխարհային օրն է Առաջին օգնությունը և կենցաղային պատահարները

Մեպտեմբերի 9-ին ամբողջ աշխարհում մշվում է Առաջին օգնության համաշխարհային օրը: Դրա նպատակն է բարձրացնել կյանքեր փրկելու համար առաջին օգնության գիտելիքների ու հմտությունների կարևորության վերաբերյալ իրազեկությունը, ինչպես նաև ջատագովել, որ դրանք հասանելի լինեն նյութաբանջուրին:

Ամեն տարի միլիոնավոր մարդիկ վնասվածքներ են ստանում կամ մահանում են՝ անհամապատասխան արձագանքի կամ ուշացած օգնության պատճառով: Առաջին օգնությունը արդյունավետ և արագ գործողությունների շարքում կենսական նշանակություն ունեցող այն առաջին քայլն է, որն օգնում է կանխել լուրջ վնասվածքները և մեծացնել փրկվելու շանսերը:

Առաջին օգնությունը առավել անվտանգ և դիմակայուն համայնքներ կառուցելու կարևոր բաղադրիչներից է, ինչն էլ իր հերթին նպաստում է աղետների նախապատրաստվածությանը և առողջապահական վտանգների նվազեցմանը:

Արդեն երկար տարիներ է, ինչ «Առաջին օգնությունը» Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) ռազմավարական ուղղություններից է:

- Մենք մեծապես կարևորում ենք Առաջին օգնության գիտելիքների տարածումը բնակչության տարբեր խմբերի շրջանում, և մշտապես զարգացնում ենք մեր կարողություններն այս ոլորտում: Վերջին տարիներին մեծ թվով դասընթացներ ենք իրականացրել հատկապես սահմանամերձ մարզերի համայնքներում, քանի որ դրանք առավել խոցելի են, - նշում է ՀԿԽԸ Գլխավոր քարտուղար Աննա Եղիազարյանը:

ՀԿԽԸ-նմիակն է երկրում, որ Առաջին օգնության Եվրոպական խորհրդատվական կենտրոնի չափանիշներին համապատասխան դասընթացներ է իրականացնում տարբեր տարիքային և մասնագիտական խմբերի համար՝ արտակարգ իրավիճակներից և դժբախտ պատահարներից բնակչության խոցելիությունը նվազեցնելու նպատակով: ՀԿԽԸ Առաջին օգնության ուսումնամեթոդական կենտրոնի մասնագետներն իրականացնում են նաև ԱՕ սպասարկում գանգվածային միջոցառումների ժամանակ, ինչպես նաև ծրագրեր՝ ուղղված երեխաների անվտանգ վարքագծի դաստիարակմանը:

Այս տարվա թեման կենցաղային *արտակարգ պատահարներն* են, այն դեպքերը որոնք անսպասելի ու հանկարծակի տեղի են ունենում տանը, և կարող են լուրջ վնասվածքի կամ մահվան պատճառ դառնալ: Այդ պատճառով, մենք ցանկանում ենք բարձրացնել այն հնարավոր վտանգների վերաբերյալ իրազեկվածությունը, որոնց մարդիկ կարող են առնչվել իրենց տներում, ինչպես նաև ներկայացնել այն պարզ քայլերը, որոնք կարելի է ձեռնարկել առօրյա յուրաքանչյուր արտակարգ իրավիճակների հիմակայելու համար:

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը (ՀԿԽԸ), լինելով Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժման լիիրավ անդամ, առաջնորդվում է Շարժման հիմնարար սկզբունքներով և հանդիսանում է կառավարությանն օժանդակ կառույց՝ մարդասիրական ոլորտում: ՀԿԽԸ առաքելությունն է նվազեցնել բնակչության խոցելիությունը՝ մարդասիրության ու ժիմոֆիլիզացմամբ, նախապատրաստվել հիմակայելու այն իրավիճակներին, որոնք կարող են բնակչության խոցելիության պատճառ դառնալ, ցուցաբերել անհրաժեշտ օգնություն՝ սատարելով սոցիալ-տնտեսական ծանր պայմաններում գտնվող մարդկանց: